Ծրագրի անվանումը	Վարդենիս համայնքի Կախակն բնակավայրի 470 մետր ճանապարհահատվածի ասֆալտապատում /ջրահեռացում, գծանշում, կահավորում/
Մարզ	Գեղարքունիք
Համայնքը /համայնքները	Վարդենիս
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	.175կմ, 75կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Վարդենիս՝ 39162 Կախակն՝ 397
Սահմանամերձ համայնք/բնակավայր	Վարդենիս համայնքի Կախակն բնակավայրը սահմանամերձ է
Բարձր լեռնային համայնք /բնակավայրի	Բարձրլեռնային
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը, դրա իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, գործողությունները և շահառուներ	Վարդենիս համայնքի Կախակն բնակավայրը բարձրլեռնային է, հանդիսանում է «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ ազդակիր բնակավայր: Բնակավայրը ունի դպրոց, գործում է բուժկետ և վարչական շենք: Կախակն բնակավայրի բնակիչները հիմնականում զբաղվում եմ անասնապահությամբ և հողագործությամբ: Բնակիչները իրենց առօրյա կարիքները բավարարելու առաջնային ապրանքները գնելու համար հիմնականում կապը պահում են մոտակա բնակավայրի Մեծ Մասրիկի հետ: Բնակավայրի կենտրոնական ճանապարհը, որը կապում է Կախակն-Մեծ Մասրիկ բնակավայրերը ներառված է 2024թվականի

սուբվենցիո ծրագրերի մեջ և նախատեսվաում է ասֆալտապատել, ոչ պակաս կարևոր նշանակություն ունի գյուղամիջյան ճանապարհը, որը կապում է բնակավայրի մեծ մասը կենտրոնական ճանապարհին: Բնակավայրի ներքին թաղամասերի ճանապարհները գտնվում է անբարեկարգ վիճակում, ամբողջովին քանդված է, դժվար երթևեկելի է հատկապես փոքր մարդատար ավտոմեքենանաների համար, իսկ ձմռան ամիսներին անբարեկարգ ճանապարհներն ավելի են բարդացնում ձնահեռացման աշխատանքները և շատ հաճախ ճանապարհները դառնում են ոչ երթևեկելի: Երեխաների համար ձմռան ամիսները իսկական փորձություններ են դառնում դպրոց գնալը:

Խնդրին լուծում տալու համար առաջարկվում է բնակավայրի ամենաբանուկ և վատթարագույն թաղամասի ճանապարհի 470 մետր ասֆալտապատում՝ ջրահեռացմամբ, գծանշմամբ և կահավորմամբ: Ծրագրի անմիջական շահառուներն են տվյալ թաղամասի բնակիչները՝ 210, 55 տնային տնտեսություն:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը դեռևս առկա չեն, բայց նախնական ուսումնասիրությունների համաձայն ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 30.353.000 ՀՀ դրամ /կից ներկայացված է իրականացվելիք աշխատանքերի ֆինանսական նախնական գնահատականները, հաշվարկները/:

Ծրագիրը ներկայացված է համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրում, որի հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում:

Ծրագրի կատարման ժամկետները	**04.01.2024-31.12.2024** Ծրագրի ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ օգոստոսի 4-ի N 1198-Ն որոշման Հավելված N 1-ի 2-րդ կետով սահմանած ժամկետներում կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվությունը:
Ծրագրի հնարավոր ռիսկերը	Վարդենիս համայնքը ունի նմանատիպ ծրագրեր իրականացնելու փորձ, քանի որ վերջին տարիներին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել և իրականացվում են ասֆալտապատման աշխատանքներ: Վերոնշյալ ծրագրի ռիսկ կարող են լինել ֆորսմաժորային իրավիճակները, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ հնարավոր չի լինի իրականացնել ծրագիրը:

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վարդենիս համայնքի մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագրի ֆինանսական գնահատականները

Հ/Հ	Միջոցառման անվանում	Ծրագրի արժեքը, ընդամենը/հազ. դրամ/	Պետական բյուջե /հազ.դրամ/
1	Վարդենիս համայնքի Կախակն բնակավայրի 470մետր ճանապարհահատվածի ասֆալտապատում /ջրահեռացում, գծանշում, կահավորում/	*30.353 490 ՀՀ դրամ*	*30.353 490 ՀՀ դրամ*
1.1	Շինարարական աշխատանք	28.687.000 ՀՀ դրամ	28.687.000 ՀՀ դրամ
1.2	Նախագծանախահաշվային փաստաթղթերի և փորձաքննության ձեռքբերում	1.000.000 ՀՀ դրամ	1.000.000 ՀՀ դրամ
1.3	Տեխնիկական հսկողություն	546.000 ՀՀ դրամ	546.000 ՀՀ դրամ
1.4	Հեղինակային հսկողություն	120.000 ՀՀ դրամ	120.000 ՀՀ դրամ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**